ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 մայիսի 2016 թվականի **թիվ 8** քաղ. Երևան

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետագծելիության մեխանիզմի ձեւավորմանն ուղղված միջոցառումների մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետագծելիության մեխանիզմի ձեւավորման նպատակով՝

1. Ի գիտություն ընդունել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միության) անդամ պետությունների մաքսային տարածքում ապրանքների տարանցիկ փոխադրման դեպքում մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ դրանց տեղաշարժի հետագծելիությունն ապահովելու մասին տեղեկատվությունը:

2. Միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների կառավարություններին՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը պատրաստել Միության անդամ պետությունների՝ Միության մեջ ապրանքների հետագծելիությունն ապահովող մեխանիզմի ներդրման մասին միջազգային պայմանագրի նախագիծ:

Նախագծի մշակման ժամանակ հիմք ընդունել այն, որ ապրանքների հետագծելիության մեխանիզմը պետք է հիմնվի ապրանքների հետագծելիությունն

ապահովող ազգային համակարգերի վրա, որոնք ապահովում են Միության անդամ պետությունների իրավասու (լիազոր) պետական մարմինների միջև առևտրային շրջանառության մեջ գտնվող ապրանքների մասին տեղեկատվության փոխանակումը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդին՝ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը սահմանել ապրանքների հետագծելիության ապահովման մեխանիզմի ստեղծման հիմնական մոտեցումները, այդ թվում՝ իրագործման փուլերը, հասկացութային ապարատը և Միության անդամ պետություններում գործունեության առանձնահատկությունները՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները, ապրանքների հետագծելիության և տեղեկատվական փոխգործակցության սկզբունքները, ինչպես նաև հետագծելիության ենթակա ապրանքների կատեգորիաները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**